

Նանք 'ի գործ դրաւ որպէս զի տիրոջ մարմինը ջրին երեսը պահէ :

Սուեռնոնիոս որ մանր պատմութիւններով շատ կը գլուարճանար , ամենայն փութով քննեց օրագիրները , և անոնց մէջ գտաւ Տիբերիոսի և Կայիգուլայի ծննդեան օրերը . նոյնպէս յառաջ կը բերէ երեք նշանագիրներն , զոր կողոյրտ լատին գրերու մէջ անցուց . և յետոյ բոլորն ալ իրեն հետ ջնջուեցան : Օրագրաց մէջ կը գտնուի մասնաւորապէս Ներոնի շինած ամփիթէատրոնն արեւմտեան դաշտին մէջ . նոյնպէս գտաւ անոնց մէջ Գերմանիկոսի յուղարկաւորութեան վրայ յիշատակութիւններ և ներկայ եղելոց անունները : Յօրնաղաւ կը ցուցնէ որ ծնելոց և պսակելոց թիւերն անգամ կը նշանակուէին անոնց մէջ :

Օրագիրներն չարունակուեցան մինչև Կայսրութեան վերջերը , և Թէոդոսեան օրինագրաց մէջ օրագրողին անունն անգամ կը նշանակուի diurnalius բառով . բայց անոնց կերպին ու հրատարակուելուն վրայ շատ քիչ ծանօթութիւն կայ , հանգերձ Ռէնսէնի բաղմախոյզ և բազմահմուտ քննութեամբ :

Օրագրաց հոգը գանձապետաց ձեռքն էր . և առանց իշխանաց հաւանութեան օրագիր չէր հրատարակուեր . ասանկ կը պահանջէր կայսերական իշխանութիւնն : Թուղթերու վրայ կը գրէին , և Հռոմ մարդիկներ կային որ ասոնցմով իրենց կենաց պարէնը կը գտնային : Քանի մը օր հրապարակի մէջ կը դնէին . և իւրաքանչիւր որ կըրնար ազատ կարգալ և օրինակել զանոնք , Յետոյ կ'երևնայ թէ դանոնք հառարակաց գանձատան և գրատանց մէջ կը պահէին :

Անոնց արտաքին ձևոյն ու գրութեանց վրայ մասնաւոր յիշատակութիւն մը չկայ : Միայն Կուինտիլիանոս կը գանգատի որ օրագիրները լեզուին խանգարման պատճառ եղած ըլլան : Ասոնցմէ ժանօթութիւններ քաղեցին Տակիտոս , Սուեռնոնիոս , Պլինիոս և յաջորդ մատենագիրները՝ Հռոմէական պատմութեան նկատմամբ : Ռ'րչափ ալ խանգարեալ և չարաչար 'ի կիրարկեալ ըլլան 'ի բանակալութեան՝ սակայն ասոնք կայսերական պատմութեան զլխաւոր աղբիւրներէն մէկը կը համարուին :

ԵՒԱՅԻ ՇԻՐԻՄՆ ԸՆՏՏԱՅԻ ՄՕՏ


Ճիշտաւ կամ ճիշտէ է քաղաք Արաբիոյ Հէճազ գաւառին մէջ . թերաւ կըզուոյն հիւսիսային արեւմտեան կողմը կ'իյնայ՝ Մէքքէէն ինն հազարամեղր հեռու , և կը համարուի սրբազան սեպուած քաղաքին մէկ նաւահանգիստը : Ճիշտէն ալ Տաճկաց համար սուրբ քաղաքներէն մէկն է : Խաչուէի , բամբակեայ հիւսուածոց , Եթովպիոյ խնկեղինաց և Հնդկաստանի կերպասուց շահաւաճառի տեղի մ'է : 1858ին գնդակակոծեցաւ Անգղիացւոցմէ , վասն զի մահմետականները Անգղիացւոց և Գաղղիացւոց հիւպատոսները սպաններ

էին : 1811 տարւոյն՝ Մէհէմետ-Ալի տիրեց Հէճազի , և նոյն ճամբով նաև Ճիշտէ քաղաքին ալ տիրապետեց :

Ճիշտէի յիշատակարաններէն երեքի կը համարուի Օմէնէ Հալվա կամ շիրիմի Եւայի կոչուածն : Գրեթէ քսան վայրկեան քաղքէն հեռու հիւսիսային կողմը կը տեսնուի ասիկայ ցանկապատի նման որմով բարձրացած , առ 'ի կողաց գմբէթ մը ունենալով . Մահմետականք կը կարծեն որ մարդկային ազգի նախամօրը գերեզմանն հոն ըլլայ :



ՀԻՐԵՆԻԱՆԻ



ՀԵՏՏՈՒՄ ՄՈՏ